

Տեղեկատվություն անհատական տվյալների պաշտպանության տեղեկատվության ազատության պաշտպանության մարմնի մասին

2012 թ-ի հունվարի 1-ից գործող Անհատական տվյալների Պաշտպանության եվ Ազատ Տեղեկատվության Պաշտպանման Պետական Մարմնի «NAIH» խնդիրը, որը ունի ավելի ուժեղ լիազորություններ քան մինչ այդ գործող տվյալների պաշտպանության հաճնակատարը, հանդիսանում է անհատական տվյալների պաշտպանության իրավունքների իրականացման վերահսկողություն և աջակցություն, նաև հանրային տվյալների հասանելիություն:

Տվյալ Մարմնի գործունեությունը առաջին հերթին կարգավորվում է տեղեկատվության ինքնորոշման և տեղեկատվության ազատության մասին CXII առ 2011 թ. օրենքով:

Ըստ այդմ,

- անձնական են համարվում ցանկացած տվյալներ, ինչպիսին են՝ անուն, ազգանուն, էլեկտրոնային փոստ, հասցե, հեռախոսահամար եվ այլն, կրթությունը, եկամուտները, նաև աշխատանքի գնահատականը կամ վարկունակությունը:
- հրապարակային են համարվում այն տվյալները, որոնք գտնվում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրենց ենթակայության տակ գտնվող պետական միջոցներով գործող կազմակերպությունների և ընկերությունների տրամադրության տակ, ինչպես օրինակ պայմանագրերում, համաձայնագրերում, ընկերությունների գրանցամատյաններում առկա տվյալների մեծամասնությունը:
- հասարակության շահերից էլնելով հանրային կարող են դառնալ այնպիսի անձնական տվյալներ, որոնց հրապարակման համար առկա է օրենք՝ օրինակ պաշտոնը, անունը, ազգանունը եվ պետական կառույցների կամ առևտրային կազմակերպությունների ղեկավարների աշխատավարձը:

NAIH դիմումատուների բողոքները սովորաբար ուղղված են անձնական տվյալների անօրեն օգտագործման կամ հասարակական շահերից էլնելով տվյալների հրապարակման հնարավորության բացակայության «որոշ դեպքում սահմանափակման» դեմ:

Խորհուրդ է տրվում առաջին հերթին դիմել նրանց, ովքեր վերամշակում են տվյալները, որպեսզի լիազորությունների շրջանակներում վերացվեն իրավախախտումները:

Եթե դիմումը անարդյունք լինի, ապա NAIH իրավիճակի վերջամուծության շրջանակներում կզգնի բողոքը և կպահանջի անօրեն գործողությունների դատարեցումը:

Անարդյունք հարցման դեպքում, կամ էլ ծառայողական պարտականություններից էլնելով եթե տվյալների ապօրինի մշակման հանգամանքները արդարացնում են նման քայլը «դեպքը վերաբերվում է շատ մարդկանց, կամ վնաս է պատճառում կամ էլ խախտում է մարդկանց շահերը», տվյալների պաշտպանության գործում առկա է վարչական վարույթի հնարավորություն, որի արդյունքում օրինախախտը կարող է տուգանվել մինչև 10 մլն ֆոքրինտ: Կազմակերպությունները, որոնք զբաղվում են հասարակական խնդիրներով, կապված

հանրային բնույթի տվյալների բացահայտման իրավունքի հետ, այսինքն իրականացնում են ազատ տեղեկատվություն, ունեն 2 պարտականություն՝ մի կողմից կայքում պետք է նշված լինեն օրենքում զետեղված տվյալները, մյուս կողմից տվյալներին վերաբերող ստացված հարցումները պետք է կատարվեն: Կարելի է դիմել NAIH, եթե տվյալները հրապարակված չեն, կամ հրապարակված են մասնակիորեն, նաև եթե տվյալները հնացել են, կամ նրանց կրկնօրինակները չափազանց թանկ են:

NAIH վարում է տվյալների պաշտպանության գրառումներ:

տվյալների պաշտպանության աուդիտը NAIH-ում վճարովի ծառայություն է, որը տվյալների վերամշակման կազմակերպությունը կարող է նախաձեռնել նույնիսկ մինչև տվյալների ծրագրված վերամշակման սկիզբը: Վերլուծությունը ներառում է ռիսկերի հայտնաբերում, ուշադրություն հրավիրում օրենքին հակասող դեպքերի վրա, ինչպես նաև առաջարկներ անում դրանց վերացման ուղղությամբ:

2015 թ. հոկտեմբերի 1-ից նման գործողությունը կանցկացվի պարտադիր կազմակերպչական կարգավորման հաստատմանն ուղղված պրոցեսի շրջանակներում, որը կհեշտացնի տվյալների փոխանցման գործընթացը հետագա մշակման համար Եվրոպական տնտեսական գոտուն չպատկանող երկրներ՝ ապահովելով անհատական տվյալների պաշտպանության համարժեք մակարդակ կամավոր պարտավորությունների միջոցով:

Կարևոր պետական խնդիրներից է համարվում պետական հաստատության կողմից անցկացվող գաղտնիության վերահսկողությունը, որը ուսումնասիրում է ազգային գաղտնի տվյալների հավաստագրումը «ատեստացումը» այլ կերպ ասած համազգային նշանակության գաղտնիքները, և իր որոշմամբ կարող է դադարեցնել գաղտնիության գործընթացը: Եթե գնահատողը չի համաձայնվում NAIH վորոշմանը, նա պետք է դիմի բողոքարկման դատարան:

NAIH որպես տվյալների պաշտպանության պետական իշխանության մարմին ներգրավված է միջազգային համագործության մեջ ինչպես ԷՄ-ի հետ, այնպես էլ նրա սահմաններից դուրս, օրինակ իրականացնում է տվյալների պաշտպանության վերահսկողություն Հունգարիայի կողմից այնպիսի համակարգում, ինչպիսիք են Շենգեն տեղեկատվական համակարգը, Եվրոպոլը արտոնագրային տեղեկատվության համակարգը: Տվյալների պաշտպանությանը վերաբերող բողոքների ներկայացման պայմաններին կարելի է ծանոթանալ NAIH-ի կայքում «Միջազգային հարցերի հետ կապված տեղեկատվություն» բաժնում:

NAIH Անձնական Տվյալների Պաշտպանության և Տեղեկատվության ազատության Պետական Մարմին

Բուդապեշտ, Szilagy Erzsébet fasor 22 / C.

Հեռ: + 36-1-3911400

Fax: + 36-1-3911410

Email: ugyfelszolgalat@naih.hu